

Title: LIFT UP NOW THINE EYES

by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,
Preached at the Los Angeles University Cathedral
Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

Վերնագիր. ԱՉՔԵՐԴ ԲԱՐՉՐԱՅՐՈՒ

Դր. Ժենե Սքոտի կողմից Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր,
Քարոզվել է Լոս-Անջելեսի «Յունիվերսիթի կաթողրայ»-ում
Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են
(Բոլոր աստվածաշնչյան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան թարգմանությունից)

ԱՉՔԵՐԴ ԲԱՐՉՐԱՅՐՈՒ

Սա առաջին կիրակին է, որ ես սկսում եմ խոսել իմ ժողովրդի՝ ուսանողների այս դասարանի հետ այնպես, ինչպես սովորաբար անում ենք յուրաքանչյուր կիրակի օր: Ոչ մի հատուկ օր, ոչ մի հատուկ թեմա. որովհետև այն թեման, որին ես պարբերաբար անդրադառնում եմ, Ծննդոց 13-րդ գլուխն է: Հիմա, իմ սովորական երեք ժամը կկրճատվի և կդառնա մոտ 30-40 րոպե, այնպես որ հանգիստ եղեք: Սա առաջին անգամն է, որ ես լսում եմ, թե ինչպես են այս շենքում ծածանվում Աստվածաշնչի այս թերթերը:

Ծննդոց 13: Հիմա թույլ տվեք պատմել ձեզ բովանդակությունը: Աբրամը հենց նոր Եգիպտոսում ողջ գործը փչացրեց: Եվ այս «հավատքի Հայրը»՝ և՛ եբրայեցի և՛ քրիստոնյա, որի վրա հենվում է Սուրբ գիրքը՝ որպես իր սկզբնաղբյուր, եթե որևէ այլ բան չի ապացուցում, ապա մեկ բան հաստատ ապացուցում է. այն, որ Աստված սովոր է գործ ունենալ նմանատիպ մարդկանց հետ: Իմ խմբագիրներն այնտեղ՝ մեքենայի մեջ, իրենց իսկապես լավ կզգան սրա համար. ես ամբողջ աշխատանքը նրանց եմ թողել:

Հավատք: Ի՞նչ է ՀԱՎԱՏՔԸ: Գործողություն, որը հիմնված է համոզմունքի վրա և պահպանվում է վստահությամբ: Մենք խնդիր ունենք անգլերեն լեզվում: Սա ձեզ համար հնություն է, բայց ես պատրաստվում եմ այն ձևակերպել այն երկու-երեքի համար, ովքեր այստեղ են գտնվում: Մենք խնդիր ունենք անգլերեն լեզվում, որը կապված է թե՛ Հին կտակարանի եբրայերեն բառերը, թե՛ Նոր կտակարանի բառերը «հավատք» անվան տակ թարգմանելու հետ: Անգլերենում մի անուն են ընտրել և ամբողջությամբ ոչնչացրել վստահության և հավատքի այն իմաստը, որը հաղորդում են աստվածաշնչյան բառերը: Դուք նույնպես սա գիտեք:

Հավատք կամ վստահություն բառերը Հին կտակարանում առաջացել են երկու բառից: Մի բառը նշանակում է՝ «վազել և ապաստան գտնել ժայռի մեջ» կամ «պատասպարվել մայր թռչունի թևերի տակ»: Դու կարող ես ամբողջ օրը կանգնել և նայել ժայռին՝ իմանալով, որ այն կպատսպարի քեզ, բայց դա հավատք կամ վստահություն չէ, ինչպես Հին կտակարանի բառն է նշանակում, մինչև մարմնովդ չկառչես

այդ համոզմունքից և վստահությունից և վազես այդ ապաստանի մեջ: Հին կտակարանի մյուս բառը նշանակում է «ամբողջ ծանրությամբ հենվել գավազանին»: Դու կարող ես համոզված լինել, որ գավազանը քեզ կպահի, բայց մինչև ծանրությունդ չես դնում նրա վրա, դու չես վստահում, կամ եթե փորձեմ բառ կազմել, չես «հավատում»:

Նոր կտակարանի բառը հունարենում pisteo բառն է (անգլերեն տառերով)... Անցյալ շաբաթ ինչ-որ մեկն ասաց. «Կարո՞ղ եք իջեցնել շերտավարագույրը կամ ինչ-որ բան, կամ էլ մի փոքր մեծ տառերով գրել: Մենք չենք տեսնում»: Նա երևի օտար մարդ էր: Ե՞րբ եք դուք երբևէ կարողացել կարդալ որևէ բան, որ ես գրել եմ գրատախտակին: Ես նրա վրա չեմ գրում, որպեսզի դուք կարդաք: Եկեք դա ճշտենք: Սա իմ մտքերը հավաքելու համար է. ես կարող եմ կարդալ այն, ինչ գրում եմ, իսկ դուք արդեն գիտեք, թե մինչ այդ ինչ եմ ես ասել:

Pisteo բառից մենք ստանում ենք այդ ամբողջական իմաստը. գործողություն, որը հիմնված է համոզմունքի վրա և պահպանվում է վստահությամբ: Երբ այդ բառը և Հին կտակարանի մյուս երկու բառերը թարգմանել են որպես «հավատ» կամ «համոզմունք» (ոչ թե հավատք), ոչնչացրել են բառի իսկական նշանակությունը: Եվ ՀԱՎԱՏՔԸ հասցրել են մի բանի, որը դու կարող ես թողնել քո ուղեղի մի անկյունում, և եթե դա ճիշտ է, ուրեմն դու ունես հավատք: Նման բան չի ասվում ո՛չ Հին, ո՛չ Նոր կտակարաններում: Հավատքը մի գործողություն է, որի ժամանակ դու մարմնով կառչում ես համոզմունքից՝ հաստատված վստահությամբ և անձդ վտանգի ենթարկում նրա համար, ինչին հավատում ես և վստահում:

Հիմա, ամբողջ աշխարհը խոտորվել էր Նեբրոլֆ մեծ խռովարարի օրոք: Սուրբ գրքի ապոկրիֆները մարգարեություն ունեն Աբրահամի ծնունդի մասին, ինչը վախեցրել էր Նեբրոլֆին: Աբրահամի հայրը՝ Թարան, (ես հավատում եմ, և ապոկրիֆներն էլ դա հաստատում են) նրան ուղարկում է կրթվելու Սեմի և Նոյի մոտ, որոնք դեռ կենդանի էին: Թող լինի այդպես. և սա միգուցե տալիս է նաև այն բանի բացատրությունը, թե ինչու էր ամբողջ աշխարհը խոտորվել, և Աստված կարողացավ գտնել ընդամենը մեկ մարդու, որը կվստահեր Իրեն:

Եվ Նա կանչեց Աբրահամին՝ թողնելու իր ընտանիքը և քաղաքը և գնալու այն վայրը, որտեղ Աստված նրան կանչել էր, բայց դեռ չէր առանձնացրել: Այս ճշգրտությամբ նա այնքան հավատք ուներ Աստծո խոստմունքի համար, որը վերաբերում էր այն վայրին, ուր նա կանչված էր, որ նա իր հետ վերցրեց նաև իր ընտանիքին: Նա չթողեց նրանց, չնայած պետք է այդպես աներ ամբողջ հրամանը կատարելու համար: Նա դուրս եկավ Ուր քաղաքից և, անապատի միջով ճամփորդելով երեքից չորս ամիս, բնակություն հաստատեց մի վայրում, որը ստացավ «Խառան» անունը այն պատճառով, որ նա կանգ առավ այնտեղ. «խառան» նշանակում է «կանգ առնել»:

Հետո նրա հայրը մահացավ: Նա շարունակեց առաջ շարժվել, բայց իր հետ վերցրեց բարեկամներից մեկին՝ «Դավոտ» անունով:

Նա մոտեցավ մի վայրի, որը կոչվում էր Նաբլուս (երբեմն Աստվածաշնչում կոչվում է նաև Լուզ): Այն հետագա տարիներին Հակոբի կողմից վերանվանվեց Բեթել՝ «Աստծո տուն»: Քանի որ այս իրադարձությունները գրի են առնվել Բեթել անվան ի հայտ գալուց հետո, այդ վայրի սկզբնական անունը չի տրվում: Այն գտնվում է երկու սարերի միջև, որոնք հետագայում անվանվեցին Օրհնության սար և Անեծքի սար՝ Գարիզին սար և Գերաղ սար: «Օրհնություն» և «Անեծք»՝ այն հովտի երկու կողմերում, որտեղ Աբրահամը եկավ. Սամարիայի այս լեռնային շրջանները լավագույն դեպքում այդքան էլ գրավիչ չեն: Մինչդեռ, Աստված ասաց նրան (եթե հավատանք պատմական գրառմանը). «Սա է այդ վայրը»:

Այդ խոստմունքից անմիջապես հետո Աբրամը մեծ փորձ անելու հավատք ունեցավ, որպեսզի թողներ իր տունը՝ չիմանալով, թե ուր է գնում: Հիմա նա ստացավ խոստմունքը. «Սա է այդ վայրը»: Հիմա ես իսկապես ցանկանում եմ զարգացնել այս պատմությունը, որովհետև այս եկեղեցին բնութագրվում է որպես մեծ զոհաբերություն կատարելու համար միշտ հոժարակամ եկեղեցի, իսկ հետո, երբ հաղթանակը մեր ձեռքում է, ու մի փոքր ճնշում է գալիս, մենք թուլանում ենք: Դա նորություն չէ:

Եթե մտածեք և ավելի մանրամասն ու խորը ուսումնասիրեք աստվածաշնչյան այս կերպարներին և ոչ թե նրանց ձեր ուղեղի անկյունում թողնեք, որպեսզի կարողանաք մեկ այլ բանի մասին մտածել, իմ կարծիքով Աբրահամից շատ ավելի մեծ խիզախություն պահանջվեց (որը հավատքի 90%-ն է, իսկ 9%-ը հաստատականությունն է և 1%-ը՝ մյուս բաները) տեղահան լինելու՝ հիմնվելով Աստծո այն խոստմունքի վրա, որ նա կանչվում է այդ անապատային տարածքներում գտնվող մի վայր, որի տեղը նույնիսկ դեռ չգիտի, քան առաջին իսկ նեղության դեպքում մնալու այն վայրում, որի համար Աստված ասաց. «Սա է այն վայրը»: Բայց Աստծո «Սա է այն վայրը» խոսքերից անմիջապես հետո սովոր զարկեց երկրին:

Հիմա, հիշում եք, երբ մի քանի ամիս առաջ ես սկսեցի քարոզել Աստծո ուզած ձևով զոհաբերություն տալու մասին: Ի պատասխան նրանց, ովքեր ասում են. «Աստծուն դուրս տուր, և Նա քեզ կհարստացնի»՝ ես ձեզ ցույց տվեցի առաջին տվողին՝ Աբելին, որին Աստված հավանեց, երբ նա ճիշտ ձևով բերեց իր զոհաբերությունը, բայց սպանվեց իր ջանքերի դիմաց, և Կայենին, որը սխալ ձևով բերեց իր զոհաբերությունը:

Աստծո անունից մենք շատ հեքիաթային բաներ ենք ստանում արդի համոզիչ քրիստոնեության մեջ: Այն, ինչ պատահելու է Աբրահամի հետ, նորմալ է համարվում: Աստված կատարեց Իր առաջին խոստումը (Աբրահամին տանել այն վայրը, ուր ինքն էլ չգիտի) այն պահին, երբ նա հասավ այնտեղ: Աստված

Բեթելում ասաց. «Սա է այն վայրը»: Դրանից անմիջապես հետո Աբրահամը փորձվեց: Սովը պատեց երկրին: Ի՞նչ եմ ես ձեզ ասել: Եթե դու սկսում ես հավատալ Աստծո Խոսքին և գործում նրա հիման վրա, ի՞նչ է տեղի ունենալու քեզ հետ: Հը՞: Հիմա, այդ բոլոր քարոզիչներն ասում են քեզ. «Քայլեք շարքերի արանքով, ծնկի իջեք այստեղ, հեկեկացեք 5 րոպե: Երկինքը կպայծառանա, ձեր բանկային հաշիվը մեխանիկորեն կավելանա, և եթե ունեք գորտնուկներ, դրանք կպոկվեն և դուք երեխայի մարմին կունենաք: Եթե կռվի մեջ մտնեք, Աստված կօգնի ձեզ, որ հաղթեք»:

Ի՞նչ եմ ես ձեզ ասում: Եթե գալիս ես Աստծո մոտ և սկսում կիրառել Նրա Խոսքը, ամբողջ դժոխքը կարձակվի քեզ վրա:

Կա ընդամենը մեկ օրինական վճարամիջոց, որը կանցնի հավիտենության մեջ. կրակում փորձված հավատքը: Քանի՞ անգամ եք լսել, երբ ես ձեզ ասում եմ, որ եթե ցանկանում եք տալ քրիստոնեության պարզ սահմանումը, ապա հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչ եք ցանկանում ձեր երեխաներից (Մի լսեք այն մարդկանց, ովքեր ասում են ձեզ, թե Աստված տեղացի ոստիկանի նման փորձում է գտնել ձեզ լավ ժամանակ անցկացնելիս, որպեսզի կարողանա վերջ տալ դրան): Ի՞նչ եք ցանկանում ձեր երեխաներից: Վստահություն՞, թե՞ կատարելություն: Ի՞նչ եք ցանկանում ձեր սիրելիներից, ձեր կնոջից կամ ամուսնուց, ձեր ընկերուհուց, ձեր ընկերոջից: Վստահություն՞, թե՞ կատարելություն:

Դե, դուք հենց նոր տվեցիք լավագույն սահմանումը նրա, ինչ Աստված փորձում է ստանալ Իր ժողովրդից հենց առաջին օրվանից: Երբ դուք անցնեք այն սկզբնական կետերը, որոնց մենք անդրադառնում ենք վերջին երկու շաբաթը՝ որպես հավատքի հիմք, կտեսնեք, որ քրիստոնեության բուն էությունը սա է. Աստված փնտրում է *հավատա-ցողներին*:

Ցավոք, Նա ստեղծել է հրեշտակների մի գործ, որոնք երբեք հանկարծակիի չեն գալիս: Նրանք այնքան կատարյալ են, որ Ջիմմի Սվագերտը չկարողացավ որևէ մեկին մի փոքր անգամ մոտ բերել: Աստված կարող է ապահովել շատ բաներ, որոնք եկեղեցին փորձում է անել, այնպես որ նրանք կարող են ասել. «Ահա Աստված, տես, թե ինչ արեցինք Քեզ համար»: Միակ բանը, որ Աստված չի կարող ստիպել, ազատ տրվող վստահությունն ու նվիրումն է, որը համարվում է այն ազատության ածանցյալը, որ Նա տվեց մարդկանց, իսկ վերջիններս այն օգտագործեցին մեղքին ազատություն տալու համար (սա կոչվում է «ազատության սխալ օգտագործում»): Եվ ողջ պատմության ընթացքում Աստծո փնտրող հայացքն ուղղված է այնպիսի տղամարդկանց կամ կանանց, ովքեր կվստահեն Իրեն:

Այն, ինչ քեզ հարկավոր է անել, Եդեմի պարտեզ վերադառնալն է: Ինձ համար միևնույնն է, թե դու հավատում ես, որ այն առասպել է, որը պարունակում է խորը ճշմարտություններ, թե դա պատմական իրական փաստ է: Ելակետային խնդիրն այն է, որ Աստված խոսեց կյանքի մասին և զգուշացրեց մահվան

մասին: Արուսյակը, ինչ էլ նա լինի, եկավ և ասաց. «Նա դա նկատի չունի, Աստված դա չի անի»: Եվ նրանք հավատացին «ստի հորը» և կասկածեցին Աստծուն: Եվ այդ օրվանից մինչև հիմա Աստված փնտրում է զավակների, ովքեր կվստահեն Իրեն, ովքեր գտնելով Նրա Խոսքը, այն պարզապես չեն գցի տվյալների բանկում, այլ գործողության մեջ կդնեն այդ խոսքը և կվստահեն, որ Նա, ով խոսեց, և ոչնչից եղավ ամեն ինչ, պաշտպան կկանգնի Իր Խոսքին:

Դրա համար է, որ գոյություն ունի այս եկեղեցին: Այս կիրակի օրերին ես չունեմ որևէ այլ նպատակ, քան փորձել մարդկանց մեջ հավատք ներշնչել այն նախադրյալի հիման վրա, որ «հավատքը զալիս է լսելուց, լսելը՝ Աստծո Խոսքից»: Աստծո Խոսքը նման է սերմի, որը տնկվում է, և ասված Խոսքը ցուցաբերում է Աստծո հավատարմությունը Իր Խոսքի և այդ Խոսքը կատարելու կարողության հանդեպ: Աստված փնտրում է *հավատա-ցողների*՝ մարդկանց, ովքեր կվստահեն Իրեն: Դա չի նշանակում, որ դու պետք է նմանակես ինչ-որ կառույցային եկեղեցու. դա չի նշանակում, որ դու պետք է համապատասխանես այն կերպարին, որ Սքոտը կարող է նախագծել, դա ենթադրում է, որ հավատքի քո քայլերի մեջ ինչ-որ տեղ դու հագնում ես ակնոցներդ և որոշում մարմնովդ կառչել մի բանից, որին կարող ես հավատալ: Աստված փնտրում է այն զանձերին, որոնք կվստահեն Իրեն և կհավատան, որ երբ Նա ինչ-որ բան է ասում, Նա կանի:

Եթե հավատում եք Խոսքին, ապա Աբրամը ջրհեղեղից հետո խոտորված աշխարհից Նրա առաջին զարգացած արդյունքն էր: Բայց նրա հավատքը սկզբում կատարյալ չէր. նա միայն կես ճանապարհը գնաց: Ես ուզում եմ, որ դուք տեսնեք դա, որպեսզի չունենաք այն գաղափարը, որ մինչև լիովին կատարյալ չլինեք, խաղին չեք մասնակցի: Նա պետք է վստահեր Աստծուն և թողներ իր ընտանիքն ու քաղաքը: Նա միայն կես ճանապարհն անցավ: Ասվում է, որ նա կանգ առավ Խառանում: Նա դեռ չէր էլ բաժանվել Դովտից: Եվ երբ նա վերջապես հասավ այնտեղ, որտեղ Աստված ասաց. «Սա է այն վայրը», և մի փոքր սով սկսեց, այդ պահին նա ամբողջությամբ կորցրեց իր հավատքը: «Մի փոքրիկ սով»: «Կամ Աստված չգիտի, թե ինչ է անում, կամ սա չէ այդ վայրը», - և նա իջավ Եգիպտոս:

Հետո ես ուզում եմ, որ դուք տեսնեք, թե ինչպիսի ճարպիկի մեկն էր նա: Աբրամը՝ հերոսը... հասունանում է հավատքի մեջ և առավելագույնս փորձվում: Բայց նա սրիկա էր: Սովը սկսվեց և նա ասաց. «Ինձ համար միևնույնն է, թե ինչ է ասել Աստված, դա դեռ այստեղ կլինի, երբ ես վերադառնամ: Այստեղ սով է, ես հեռանում եմ»:

Հավատքը փորձվում է: Եվ այս սրիկան ասաց. «Մենք իջնում ենք Եգիպտոս»: Բայց նայում է իր կնոջը՝ Սառային, և ասում. «Միրելի՛ս, դու այնքան գեղեցիկ ես: Երբ մենք հասնենք այնտեղ, տղամարդիկ աչք կդնեն քեզ վրա, և իմանալով, որ դու ամուսնացած ես ինձ հետ, կսպանեն ինձ. ինձ ճանապարհից դուրս կհանեն, որպեսզի տիրանան քեզ»:

Սա «հավատքի հայրն է», մարդիկ: Պատկերացնում եք, թե ինչ կլինեք, եթե այս մարդը կարողանար մտնել ֆունդամենտալիստական եկեղեցու խորհրդի կազմի մեջ: Նա ասում է Սամային. «Անուշիկս, ինչ էլ նրանք անեն քեզ հետ, դու կենդանի կմնաս և հավանաբար նույնքան գեղեցիկ կլինես, երբ նրանք վերջացնեն իրենց գործը, բայց եթե պարզեն, որ ես քո ամուսինն եմ, ուրեմն ինձ մահ է սպասվում: Ուստի ասեմ քեզ, եթե տեսնես, որ այդ տղամարդկանցից մեկը աչք է դրել քեզ վրա և եթե հարցնեն, թե արդյոք դու ամուսնացած ես ինձ հետ, ասա. «Ոչ, ոչ: Դա իմ եղբայրն է»: Իսկ ես կասեմ. «Վերցրեք նրան. նա իմ քույրն է»: Ես այնտեղ կլինեմ, որպեսզի հավաքեմ կտորները, երբ նրանք վերջացնեն իրենց գործը քեզ հետ, սիրելիս: Իսկ եթե նրանք սպանեն ինձ, ո՞վ է քեզ ազատելու, երբ նրանք վերջացնեն իրենց գործը»: Ես կարող եմ պարզապես լսել այս հիմնավորումը: Սա «հավատքի հայրն է»:

Սա ինչ-որ պատահական սուտ չէ պահի ճնշման տակ: Սա վաղօրոք, լավ մտածված, մատների արանքով նայած, խորամանկ, անիծյալ խաբեբա վարքագիծ է, որը տակնուվրա արեց հեթանոս թագավորի ստամոքսը, երբ նա վերջապես իմացավ այդ մասին:

Նրանք իջան Եգիպտոս. դուք կարդում եք այն գլուխը, որի վրա մենք կենտրոնացնում ենք մեր ուշադրությունը: Այնտեղ ասվում է, որ նրանք Աբրամի հետ շատ լավ վարվեցին նրա քրոջ պատճառով: Նրանց աչքն ընկավ Սամայի վրա (նրա անունը դեռ չէր դարձել Սարրա), և դա սեր էր առաջին հայացքից: Եվ որպեսզի համոզված լինեք, որ ամեն բան իր ուզած ձևով է ընթանում, թագավորը առատ գանձեր շնորհեց Աբրամին: Դու Աստծուն տալիս ես ճիշտ ձևով, ինչպես Աբելը տվեց և սպանվում ես: Դու ստում ես և հարստանում: Մեկ այլ քարոզի ժամանակ ես ձեզ Ամբակունի հետ կտանեմ պահապանության տեղը (նա չին կտակարանի փոքր մարզարեններից է, որը գլուխ էր կտորում այդ խնդիրը լուծելու համար) : Բայց Աբրահամը ստոր ձևով հարստացավ սուտ խոսելու դիմաց:

Հասկանում եք, այս բազում տարիներին ես շարունակ փորձել եմ չհամոզել քրիստոնեությունը կեղծ պատրվակներով եւ այն ամսագրով, որն ասում է, որ եթե դու ծառայում ես Աստծուն, ապա ամեն բան կարգին է, բայց եթե քեզ կարգի չես բերում, ամեն բան սխալ կընթանա: Ես չափից շատ սրիկաների եմ տեսել, ովքեր լավ բան են անում` 400 000 պատկերների միջից ընտրելով ծաղրանկարային ֆորմուլաների 10 կամ 12 օրինակ և ցուցադրում դրանք իրենց ամսագրում:

Այս իրական աշխարհը միշտ չէ, որ գնահատում է բարությունը: Խելացի ստախոսը գեղեցիկ քրոջ հետ, որն իրականում նրա կինն է, կարող է հաջողակ լինել այս աշխարհում: Բայց այս պարագայում նույնիսկ հեթանոսը ավելի շատ անձնային ուժեղ որակներ ուներ, քան Աբրամը: Նա իմացավ և ասաց. «Ի՞նչ կկատարվեր, եթե ես մինչև վերջ սիրատառեի այդ կնոջը և ամուսնացայի նրա հետ ու հետո պարզեի,

որ նա քո կինն է»: Նա Աբրահամին դուրս վռնդեց, բայց վերջինս հարուստ հեռացավ: Աբրամը հարուստ հեռացավ՝ լի անասուններով ու ծառաներով, ոսկիով և շատ բարիքներով:

Եվ Աստվածաշունչն ասում է, ու մենք մոտենում ենք իմ տեքստին, որ նա վերադարձավ գոհասեղանի տեղը... (որը շատ պարզ նշանակում է մի վայր, որտեղ դու մի փոքր մահանում ես ինքդ քեզ համար և ավելի շատ տրվում Աստծուն՝ ճանաչելով Նրա իրավունքները, և վրանի տեղը, որը բնութագրում էր նրան՝ որպես մեկը, որ պատրաստ է մարմնով կառչել Աստծո ասածից և շարժվել այնտեղ, որտեղ Աստված կառաջնորդի նրան): Ու երբ նա վերադարձավ այդտեղ, ի զարմանս իրեն, հենց սկզբից նրան սկսեց հետապնդել նվիրվածությամբ մինչև վերջ գնալու անհաջողությունը, որը այն հիմնական միտքն է, որն ավելորդ անգամ ուզում են շեշտել այսօր:

Ղովտը՝ նրա զարմիկը, դեռ նրա հետ էր: Եվ Ղովտի ու Աբրամի հովիվները կռվի մեջ մտան՝ ներկայացնելով իրենց համապատասխան անհազ պահանջը Բեթելի տարածքում իրենց հոտի համար սահմանափակ քանակությամբ նոսր խոտի համար: Աբրամը բնավորության որոշ ուժեղ գծեր ցուցաբերեց. միգուցե նա ինչ-որ բան սովորել էր Եգիպտոսում նրանից, որ ինչ արել էր այնտեղ, չէր ստացվել: Բայց նա ասում է. «Թող իմ ու քո մեջ կռիվ չլինի. մենք եղբայրներ ենք: Ահա Ղովտ, բոլոր երկիրը մեր առջև է: Գու ընտրիր այն վայրը, ուր ուզում ես գնալ, իսկ ես այդտեղից դուրս կգամ»: Աստվածաշունչն ասում է, որ Ղովտը նայեց և տեսավ Հորդանանի ջրաբքի հարթավայրերը և Հորդանանի կիրճը, որը հոսում էր դեպի Սոդոմ և Գոմոր ու ասաց. «Ես դա կվերցնեմ»: Գա ինձ հիշեցնում է այն երկու եղբայրների մասին, որոնք կատու էին ընտրում: Նրանցից մեկը վերցնում է ընտիր սիամական կատվին, իսկ մյուս փողոցային կատուն այնտեղ նստած է մնում, ու այս եղբայրն ասում է. «Հիմա էլ դու ընտրիր»: Ղովտը վերցրեց լավագույնը:

Հիմա պատկերացրեք տեսարանը: Նրանք վերադարձան Եգիպտոսում ունեցած անհաջողությունից: Հիմա էլ Աբրամը կորցրեց այս երկրի լավագույն տարածքը՝ այն զիջելով իր ազահ եղբորորդուն, որին երբեք չպետք է իր հետ վերցրած լիներ առաջին իսկ վայրը մեկնելիս: Եվ հիմա ես համոզված եմ, որ գտնվելով այդ զղջման իրավիճակում, նա նորից սկսելու հնարավորություն է ստանում (և հիմա ես մոտենում եմ այս ուղերձի հիմնական նպատակին, որը հուսով եմ, որ կարող է առնչվել մեր արդի կյանքի հետ):

Եվ այս 13-րդ գլխի 14-րդ խոսքում ասվում է. «Եվ Եհովան ասեց Աբրամին Ղովտը նրանից բաժանվելուց հետո. Աչքերդ բարձրացրու և մտիկ տուր քո եղած տեղից դեպի հյուսիս և հարավ և դեպի արևելք և արևմուտք. Որովհետև այդ բոլոր երկիրը, որ դու տեսնում ես...»: Նա կարող էր նայել հյուսիս և պարզ տեսնել Հերմոն սարի ձյունապատ գագաթները, արևմուտքում տեսնել Շարոնի հարթավայրերը, որոնք ձգվում էին Միջերկրականի ափով, հարավում՝ Հուդայի բարձունքներն էին, արևելքում՝ Հորդանանի

կիրճը և ջրաբքի հարթավայրերը, որոնք Դովտն արդեն ընտրել էր: «Մտիկ տուր քո եղած տեղից դեպի հյուսիս և հարավ և դեպի արևելք և արևմուտք. Որովհետև այդ բոլոր երկիրը, որ դու տեսնում ես, քեզ եմ տալու և քո սերունդին հավիտյան»: «Վեր կաց այդ երկրում ման եկ նրա երկայնության և լայնության համեմատ, որովհետև քեզ եմ տալու այն»: Այդ ժամանակ Աբրահամը հանեց իր վրանը և սկսեց քայլել:

Ի՞նչ է ուզում այս ուղերձն ասել մեզ այսօր: Ես ձեզ ձանձրացնում եմ: Այս ամենը ներածությունն է: Ուղերձը շատ կարճ է:

Այս 14 տարիների ընթացքում մենք հետաքրքրիչ ճանապարհ ենք անցել: Ես պատմել եմ ձեզ, որ առաջին կիրակին ես երբեք չէի մտածել, որ պարզապես պաշտպանելով Սահմանադրության Առաջին Բարեփոխման տեսակետը, մեզ դուրս կհրեն 30-րդ ալիքից: Ես հիշում եմ այդ գիշերը: Փաստորեն, ես կարծում եմ, որ քաղաքի բոլոր լրատվամիջոցների նյութը մենք էինք դարձել, քանի որ «Lawyers Weekly» շաբաթաթերթից մինչև մյուս թերթերը մեր մասին հոդված էին տպագրել հետևյալ խորագրով. «Վերջին ժամը 30-րդ ալիքում»:

Եվ ես հիշում եմ, թե ինչպես նրանք դադարեցրեցին մեր հաղորդմանը... Այն ամենը, ինչ մենք արել էինք, Առաջին Բարեփոխման տեսակետը պաշտպանելն էր, որը հետագայում կրկին ու կրկին արդարացվել է: Ես նայում էի մոնիտորին, երբ խրոցակը դուրս քաշվեց, և հեռուստաէկրանը սևացավ, և քանի որ մենք միաժամանակ եթեր էինք դուրս գալիս ռադիոյով, ու ես դեռ խոսում էի ռադիոյով, ես ձեզանից շատերին, ովքեր գտնվում էին այնտեղ, ասացի այն նույն ուղերձը, որի մասին այսօր խոսում եմ:

Մենք ուրիշ ընտրություն չունենք, բացի հավատքով առաջ գնալու Աստծո խոստմունքների մեջ, որոնցից է՝ «Նա կկառուցի Իր եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան» և բազում այլ խոստմունքներ, որոնք մենք ընտրել ենք Աստծո գրքից և պնդում ենք, որ դրանք մերն են 2-րդ Կորնթացիների 1.20 խոսքի իշխանության հիման վրա: Եվ ես խնդրեցի ձեզանից, որ այդ գիշեր հռչակելիք ձեր հավատքը: Ձեզանից քանի՞սն են այն ժամանակ լսել ինձ: 10 միլիոն դոլարից ավել գրավ էր դրված սնանկանալուց հետո, բայց երեք տարի անց մենք կրկին վերադարձանք: Եվ նրանք, ովքեր հավաքել են «Վերջին ժամը 30-րդ ալիքում» հոդվածի օրինակները, ասեմ, որ մենք հենց հիմա 30-րդ ալիքի եթերում ենք, իսկ վերջին ժամը շատ հեռու է գտնվում. ես կարող եմ դա ասել քեզ:

Երեք դժվար տարիները փորձեցին մեր հավատքը: Բայց ամենավատ փորձությունը եղավ այն ժամանակ, երբ ես դրա հաջորդ կիրակին մեքենայով գնում էի Գլենդելում գտնվող մեր տաճարը: Չնայած այն ամենին, ինչ ես սովորել էի այս աստվածաշնչյան կերպարներից, այդքան էլ հեշտ չէ հավատալ Աստծո խոստումներին և վերցնել նրանք ու ժամանակի միջով անցնելով հասնել և ամուր բռնվել մի բանից, որը Աստված ասել է, որ կարող է կիրառելի դառնալ քո իրավիճակում. դրանից պետք է կառչել այնպես,

ինչպես արքանյակը վեր է սլանում՝ արձակվելով ձգողության ուժից, նույն ձևով, բայց հակառակ ուղղությամբ դու ներքև ես քաշում հավիտենության այդ խոստումը, մինչև որ այն իր ազդեցությունն է ունենում ժամանակի վրա:

Երբ ես մոտենում էի Գլենդելին, ինձ հետաքրքիր էր, թե ինչպես էի կանգնելու այն ժողովրդի առջև, ում ասում էի. «Վստահեք Աստծուն, և Նա կօգնի ձեզ»: Ի՞նչ եմ ես քարոզելու հիմա, երբ նրանք վերջ են տվել մեր եթերին, որովհետև ես երբեք չէի մտածել, որ այդպիսի բան կպատահի: Իսկապես չէի մտածել: Դե, դուք, որ այնտեղ էիք, գիտեք, թե ինչ եմ ես քարոզել. նույնը, ինչ քարոզում եմ այստեղ:

Ես նույն զգացողությունն ունեի, երբ մենք ընդունեցինք քաղաքի կենտրոն տեղափոխվելու մարտահրավերը: Գիտե՞ք, թե որքան տապանագրեր գրեցին մեր հասցեին: Դուք, որ այստեղ եք եկել Սան-Ֆրանցիսկոյից... Սան-Ֆրանցիսկո, մինչ թանաքը չորացավ տապանագրերի վրա, կիրակի երեկոյան նույն նպատակով կանգնեցրեցին մեր եթերը: Մենք կրկին վերադարձանք երկուշաբթի երեկոյան: Եվ այդ ընթացքում բոլոր թերթերը գրեցին մեր մահախոսականը, ուստի Աստված այդ ժամանակ ավելի արագ գործեց: Այս ուղերձի ասելիքը սա է. ընդունիր դա որպես սովորական բան: Եթե դու պատրաստվում ես հասնել Աստծո գրքի խոստումներին (ոչ ամեն ինչ, որ տեղի է ունենում Աստվածաշնչում, մեզ համար օրինակ է ծառայում) և ես կարող եմ դրանցից շատերն ասել, օրինակ՝ «Տերը կապահովի»... Աստված երբեք չի խոստացել, որ բոլորը հարուստ կլինեն, այլ Նա ասում է. «Նա երբեք չի տեսել, որ Իր զավակները հաց մուրան»: Ես իմ եկեղեցու ժողովրդին ասում եմ, որ Քրիստոսի բանակում ոչ մի աղքատ չկա: Երբեմն դու կարող է փող չունենաս, բայց դու աղքատ չես, եթե հավատում ես Աստծուն: «Անփող լինելը» փաստացի վիճակ է. «աղքատ լինելը» մտքի վիճակ: Եվ Աստված ասել է, որ Ինքը կապահովի:

Խոստումներ... (Ես կարող եմ դրանցից ցուցակ կազմել. ամեն կիրակի ես քարոզում եմ դրանց մասին): «Ինչպիսին քո օրն է, այնպես էլ քո ուժը կլինի». երբեք չհանձնվես օրվա վերջում. Աստված յուրաքանչյուրին ուժը չափով է տալիս: Ձեզանից քանի՞սն են իրենց կյանքում առիթ ունեցել մտածելու, որ չեք կարողանա այդ օրն անցնել: Կա՞ որևէ մեկը: Դուք այստե՞ղ եք: Երբևէ չհանձնվեք օրվա վերջում: Աստծո խոստումները գործնական և իրական են, որոնք կրկին ու կրկին նշվում են Նրա Գրքի մեջ: Ձեռքից բաց մի՛ թող քո հավատքը: Տնքացող, տրտնջացող քրիստոնյաները երբեք ճեղքելով չեն հասնում նրան, ինչ Աստված փնտրում է. Նա վստահություն է փնտրում: «Ինչպիսին քո օրն է, այնպես էլ քո ուժը կլինի»: Եղյան երբեք յուրի տակառ չունեցավ. նա ուներ այնքան յուղ, որքան բավական էր ամեն օրվա համար:

Ես կարող եմ տասը ժամ խոսել խոստումների մասին: Դա չէ այսօրվա թեման. դուք գիտեք խոստումները: Այսօրվա ուղերձի նպատակն է այդ խոստումներին «հետամուտ լինելը»: Պետք չէ, որ դու կատարյալ լինես, որովհետև Աբրահամն էլ կատարյալ չէր, և դու նույնպես ունենալու ես

անհաջողություններ և սխալ արձագանքներ: Եվ որտեղ էլ այսօր լինես, ինչպիսի իրավիճակում էլ լինես... (և այս եկեղեցին, որը կրկին քաղաքի կենտրոնում է այն նախադրյալի պատճառով, որի մասին ես այսօր սովորեցնում եմ), դու ունես ընտրություն և հնարավորություն, ինչպիսին էլ լինի քո իրավիճակը, ինչ էլ ուզենա քեզ կոտրել, ինչ սխալներ էլ արած լինես, որոնց մասին միայն դու և Աստված գիտի, իսկ ինձ հարկավոր չէ իմանալ, դու Աբրահամից վատը չես:

Եվ 2-րդ Կորնթացիների 1.20-ն ասում է. «Որքան Աստծո խոստումներ որ կան, նրանում է այոն (կամ այո քեզ համար) և Նրանում է ամենը» (կամ թող քեզ լինի այդպես): Եվ հավատքի միջոցով դու կարող ես մտքով վերցնել այս խոստումը, որը տրվեց Աբրահամին և դարձնել այն քոնը:

Իսկ ո՞րն է խոստումը. «Աչքերդ բարձրացրու»: Ենթադրությունն այն է, որ իրավիճակը քեզ ընկճվածության մեջ է գցում:

Քո իրավիճակը քեզ ընկճում է... Յուրաքանչյուր իրավիճակ, որի առջև այս եկեղեցին կանգնել է, կարող էր տապալել մեզ, և մենք կարող էինք փոս փորել, գերեզման պատրաստել և պառկել այնտեղ ու աղոթել Աստծուն, որ գա, որովհետև մենք այլևս չէինք կարող առաջ գնալ: Ոչ, դու կարող ես: Որտեղ էլ այսօր լինես, ինչ էլ անես... այն, ինչ մենք անում ենք այստեղ գալով, «մեր աչքերը բարձրացնելն է այն տեղից, որտեղ մենք գտնվում ենք»: «Լավ, եթե Աստված փոխեր իմ իրավիճակը, ինձ հաներ այս անդունդից, ես դա կկարողանայի անել. ես կկարողանայի մարմնովս կառչել այդ գործողությունից, հավատալ, որ Աստված կօգնի ինձ, և վստահություն ունենալ բարձրացնելու իմ աչքերը»:

«Աչքերդ բարձրացրու քո եղած տեղից»: Ես խորհրդապաշտություն չեմ համոզում: Ես արդեն անուղղակի ձևով ասել եմ դա: Հավատքը 90% խիզախություն է՝ կամքի ուժ, 9% հաստատակամություն, 1% մնացած բաները: Ես հույս ունեմ այս քաղաք բերել այնպիսի մարդկանց, ովքեր չեն ահաբեկվի որևէ հանգամանքից: Ինչպիսին էլ լինի քո խնդիրն այսօր, Աստված քեզ հասարակ հնարավորություն է տալիս ամուր բռնվել քո կամքի ուժից և «աչքերդ բարձրացնել քո եղած տեղից»: Եթե սպասես, որ իրավիճակը փոխվի և նոր սկսես հավատքդ գործի դնել, դու երբեք դուրս չես գա քո խառնաշփոթ իրավիճակից: Ինչպես Գեդեոնը խաղողի այգում էր գտնվում, երբ հաշտվեց Աստծո հետ, այդպես էլ Աբրամը պետք է աչքերը բարձրացներ հենց այնտեղից, որտեղ գտնվում էր:

«Լավ, ես կմտածեմ այդ մասին. միգուցե դա այն է, ինչ ինձ հարկավոր է անել: Ինչպիսի կործանարար իրավիճակի մեջ էլ լինեմ, և իրականում այդքան շատ խնդիրներ ունենալով հանդերձ ես կուզենայի, որ դու լռեիր, որպեսզի ես կարողանայի գնալ և լուծել դրանք: Ես հիմա մի փոքր կմտածեմ այդ մասին և եթե կարողանամ դա հասկանալ, միգուցե այդ ժամանակ գլուխս բարձրացնեմ և փորձեմ ձեռնարկել հավատքի այս գործը»: «Աչքերդ հիմա բարձրացրու»:

Ես երբեք չեմ կանչում ապաշխարության: Ես հավատում եմ, որ ճշմարտությունը նման է մութ սենյակում լույս վառելուն, և դու տեսնում ես այդ լույսը: Եթե որևէ արձագանք կա նրան, ինչ ես հաղորդում եմ, ապա դա տեղի կունենա հենց այստեղ, որտեղ դու հիմա նստած ես:

Ես չգիտեմ քո խնդիրները: Ես գիտեմ, որ ինքս ունեմ անձնական խնդիրներ, և ես նաև պատասխանատվություն ունեմ այս եկեղեցու աչքերը վեր պահելու համար: Եվ ես ասացի, որ մենք իջանք քաղաքի կենտրոն, որպեսզի այստեղ էլ մեր հայացքը վեր պահենք: Ինչպիսին էլ լինի քո իրավիճակը, այս խոստումը քեզ համար է, որպեսզի պահանջես. «Աչքերդ բարձրացրու». հենց քո ներսում է սկսում վստահության և համոզմունքի մակարդակը: «Մի՞թե հնարավոր է, որ Աստված իսկապես պատասխան տա ինձ՝ որպես անհատի, որն անում է այս բանը»:

Ձեզանից քանի՞սը գիտեն Նոր կտակարանի այն հատվածը, երբ Աստված խոստանում է հետևյալը. «Նա ձեր կարողությունից ավել փորձություն չի տա»: Քանի՞սը գիտեն դա: Հաջորդ արտահայտության մեջ հունարեն բնագրում ասվում է. «Բայց փորձության հետ փախուստի ճանապարհ էլ է ապահովում»: Հիշում ե՞ք: Հունարենում ասվում է, որ որքան առանձնահատուկ և անհատական է փորձությունը, այդքան առանձնահատուկ ձևով Աստված փախուստի ճանապարհ է մշակել յուրաքանչյուր փորձության համար: Դա նշանակում է, որ նույնիսկ եթե դու խառնաշփոթի մեջ ես, և չես կարողանում աչքերդ վեր բարձրացնել, փախուստի ճանապարհն արդեն մշակված է:

Դու Աստծուն չես տալիս որևէ ընտրություն. եթե դու չես ընդունում փախուստի ճանապարհը, այն դեր պահպանվում է: Բայց Հիսուսն ասաց, որ Աստված, որը «հաշվում է քո գլխի մազերը», այնքան մասնավորեցնում է Իր «նվազը մարդկության ստեղնաշարի վրա», որ յուրաքանչյուր խնդրի համար, որի առջև դու կանգնած ես (որը քեզանից մեկ շաբաթ կպահանջվի ինձ պատմելու համար) Նա արդեն ելք է մշակել:

Այն ամենը, ինչ քեզ հարկավոր է անել, սա է. «Աչքերդ բարձրացրու քո եղած տեղից»: Ամեն բան սկսվում է այդ վերաբերմունքից: Դադարիք նվնվալ, դադարիք ասել. «Ես կծառայեմ Աստծուն, եթե Նա փոխի իմ իրավիճակը, և երբ ես դուրս գամ այս կամ այն խնդրի միջից, ես կմտածեմ այդ մասին»: «Քո եղած տեղից», - դա է խոստումը: Տեսե՞ք... նրա պարագայում այդ խոստումը շատ մասնավոր էր: Աստված չի ասել ինձ, որ ես կարող եմ քայլել և որտեղով քայլեմ, այդ տարածքը իմը կլինի. համենայն դեպս իմ համոզմունքի մակարդակը դեռ դրան չի հասել, այլապես ես վեր ու վար կքայլեի Բրողվեյով, և դուք էլ քարտեզը ձեռքներիդ կզնայիք տարբեր ուղղություններով: Այդ խոստումը մասնավորապես տրվեց Աբրահամին, բայց Աստված ստիպեց, որ նա արագ վերցնի այն:

Նա ասաց. «Նայիր հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք, որքան հեռու նայես, այդքան կտամ քեզ»:
Այա գալիս է «գործողության մասը», որը ենթադրում է մարմնով կառչել մի բանից, որը մի փոքր վեր է
նայելուց: Նա ասում է. «Վեր կաց, հենց հիմա և սկսիր քայլել, և ուր որ ոտքիդ թաթը դիպչի, կլինի քունը:
Պարզապես շարունակիր քայլել: Եթե ցանկանում ես, որ քո ժառանգները շատ հող ունենան, մեծ քայլեր
արա և շարունակիր գնալ: Եթե մի քիչ ես ուզում... եթե մի փոքր կարտոֆիլի հին հողակտոր ես ուզում քո
սերունդի կամ ժառանգների համար, որոնց համար խոստացել եմ, որ նրանց թիվը աստղերի չափ կլինի,
այդ դեպքում շրջանաձև քայլիր:

Ես որևէ մեկին չեմ պաշտպանում քաղաքական ասպարեզում: Երբ գնամ երկինք, առաջին բանը,
որ անելու եմ, Ադամին բռունցքով հարվածելն է, եթե նա այնտեղ լինի: Դա երկու մեկնաբանում ունի. ուր
եմ գնալու ես և ուր է գնալու նա: Սա իմ ուղերձին չի վերաբերում, բայց ես կարծում եմ, որ ես ճիշտ տեղ եմ
գնալու, որովհետև Աստված դա տալու է *հավատ-ացողներին*: Գիտեք, Ջիմմին գնալու է այնտեղ և ասելու
Աստծուն. «Երբ Դու մտածում էիր մնացած բոլոր բաների մասին, որ ես արել եմ, ի՞նչ կապ ունեի այդ
փոքրիկ մոթելը նրա հետ, որ ես հայտնվեցի այս վայրում»: Այդ ամենը հիմնված է ներկայացման վրա: Ես
տարիներ շարունակ ասել եմ, որ միակ բանը, որ Ջիմմին բացահայտեց մոթելում, վատ ճաշակն էր: Մինչև
հիմա ես չեմ լսել, որ նա ներողություն խնդրի այն անհնարին կատարելության կեղծավոր ուսմունքի
համար, որ նա քարոզում էր, բայց ինքն էլ չէր կարող դրանով ասրել, չնայած մնացած բոլորի գլուխը
լցնում էր դրանով: Աստված այդպիսի կատարելություն նկատի չունի:

Քրիստոսը մահացավ մեր անկատարության համար: Նա քանդեց այն արգելքը, որ մեր մեղքերը
ստեղծել էին և ծածկեց այդ ամենը, որպեսզի ձրի տար մեզ Իր կյանքի բոլոր խոստացված
հարստությունները մեր վստահության, մեր հավատքի պատճառով:

Աբրահամին հրամայված էր քայլել: Ես չեմ պաշտպանում որևէ մեկին: Ես ասացի, որ բռունցքով
կհարվածեի Ադամին, որովհետև նա լսեց իր հիմար կնոջը: Ես նկատի ունեմ, որ գիտեմ, որ կանայք
գերազանց են: Ես չեմ լսում նրանց: Կանայք...կանայք ապացուցում են ինձ իրենց գերազանցությունը
տղամարդու միջոցով ուղերձներ ուղարկելով, որովհետև նրանք գիտեն, որ դա միակ ճանապարհն է, որ ես
կընդունեմ դրանք, քանի որ ես շովինիստ եմ: Դու կարող ես ինձ հետ բառ հնարել, բայց նրանք գերազանց
են: Ես չեմ պատրաստվում անգամ մի փոքր տեղ տալ նրանց: Ես դա ամեն անգամ եմ ասում, և դուք
կարող եք իմանալ՝ արդյոք ես ճիշտ եմ ասում, թե ոչ: Ես ձեզ ասում եմ ճշմարտությունը. կանայք
գերազանց են: Իսկ դուք հիմար տղամարդիկ եք, որոնք ֆեմինիստական շարժման կողմնակիցներ են և
ցանկանում այդ ամենը մերկացնել: Մի եկեք ինձ մոտ լաց լինելով, երբ փոխում եք տակդիրները,
հավաքում խոհանոցը և լսում այդ ամբողջ հիմարությունը «արդարացիության» վերաբերյալ: Այս
աշխարհում ոչինչ արդար չէ, և կնոջ ճիշտ տեղը տղամարդու ներքո է:

Հիմա, երբ ես ձեզ արթնացրեցի այդ հաճախ խոստովանվող կանխակալ կարծիքով, որ «Ես ապտակելու եմ Ադամին», ես մտածում եմ, որ շատ մարդիկ, ովքեր աշխատում են ստրկության մեջ, պետք է խայտառակ անեն Քամին նրա համար, ինչ նա արեց Ջրհեղեղից անմիջապես հետո:

Փաստը մնում է փաստ: Ես գիտեմ այն, որ ուր Աբրահամը ոտք դրեց, դարերի ընթացքում այդ վայրերը ետ են բերվում, և դրա մասին գրված է Աստծո գրքում: Եթե նա վեր չկենար և չքայլեր, ես բոլորովին համոզված չեմ, որ Դավթի թագավորությունը կհասներ այն տարածքները, ուր իրականում հասավ:

Իսկ ի՞նչ կասեք մեր մասին: Մենք չունենք այդ խոստումը. համենայն դեպս, ես չունեմ. իմ մեջ չափից շատ Շերոկիի հնդկացիական գծեր կան Աբրահամի ժառանգությունը պահանջելու համար: Ես չեմ պահանջում այդ խոստումը, բայց ես անվանեցի խոստումներից մի քանիսը և կարող եմ ժամերով ասել այլ խոստումներ: Բայց այսօր ես այստեղ չեմ, որպեսզի ձեզ ասեմ խոստումների մասին: Ես դա անում եմ արդեն 14 տարի: Ես այստեղ եմ, որպեսզի ձեզ ասեմ, թե ինչն է նորմալ հավատքի ընթացքի համար. ամեն անգամ, երբ դու մտածում ես, որ քեզ մոտ ստացվեց և նստում ես ու թեթևանում, Աստված պատրաստվում է այնպես անել, որ գա փորձությունը, որովհետև Երբբայեցիս 12-ն ասում է. «Ում Տերը սիրում է, նրան խրատում է», - այդպես է գրված King James տարբերակում: Այստեղ օգտագործվում է *paideia* հունարեն բառը, որ նշանակում է. «կրթել կամ մարզել երեխային»:

Մենք գիտենք, որ ձիերին սկզբում վազեցնում են մեկ պտույտ, դրանից հետո նոր թողնում, որ վազեն հինգ պտույտ: Մենք ախտոյից չենք հանում ձիուն, որը վեց ամիս կաղ ոտքով է եղել և միայն առջևի ոտքերով է կարողացել քայլել, ու հանկարծ որոշում, որ նա պետք է հինգ քայլքով յոթ ուղղությամբ գնա: Դու մարզում ես նրանց, եթե նրանք քեզ համար կարևոր են: Դիմացկունության կիրառական փորձերի միջոցով դու պատրաստում ես նրանց, մինչև որ կարողանան հանձնել քննությունը: Իմ Աստվածաշունչն ասում է, որ դու Աստծո ապօրինի զավակ չես, եթե Նա քեզ հետ այսպես է վարվում, քանի որ Նա կրթում է քեզ, որպեսզի վստահես Իրեն ...երբ Նա առաջնորդում է քեզ հավիտենություն տանող ճանապարհով:

Այս շենք տեղափոխվելուց ի վեր ես ձեզ ասում եմ, նույնիսկ եթե մենք չենք ընդունում դա, որ փորձությունը/ քննությունը գալիս է հաղթանակից անմիջապես հետո: Մենք անմիջապես չենք անցնելու այս փորձության միջով: Ես իմ եկեղեցուն ասում եմ, որ ես շատ ավելի երջանիկ կլինեի, եթե նրանք այսօր այս վայրը լցնեին այնպես, ինչպես առաջին օրն արեցին: Հատուկ օրերին ինձ հարկավոր է լինում անցաթղթեր տալ: Մենք չենք հաղթել մեր պատերազմը, որի նպատակն է վեր ուղղված հայացքը բերել քաղաքի կենտրոն: Մենք նոր ենք պատերազմ հռչակել, և ամեն բան, որ կատարվում է ձեզ հետ և նրանց հետ, ովքեր դիտում են մեզ հեռուստացույցով ու դուք կարծում եք, թե դրանք հավանաբար պատահական իրադարձություններ են, ասեմ, որ դրանք ոչ մի կապ չունեն պատահականության հետ, քանի որ մենք

տեսել ենք, թե ինչպես է Աստված քննում քայլերը, ու ես շփոթված խոստովանել եմ, որ Աստծո ընտրությունը շատ ավելի լավ է, քան այն ընտրությունը, որ ես կատարեցի չորս տարի առաջ:

Եթե կարողանայի, ես կվերացնեի այն պատմական փաստը, որը նշում է, որ մենք երբևէ գնացել ենք Հուլիսի Փողոց, բայց մյուս կողմից, դա ապացուցում է այն, ինչ ես այսօր ասում եմ ձեզ: Այն ամենը, ինչ մենք գիտեինք այնքան աղոտ, որքան Աբրահամի կանչն էր, այն էր, որ եթե ուրիշ ոչ մեկը ջանք չթափեր այս քաղաքի համար, մեր միջոցով հավատքի վեր նայող հայացքը պետք է բերվեր այս քաղաքի սրտի մեջ:

Ինչպես Թոմ Բրեդլին ասաց երեք շաբաթ առաջ, մենք փորձեցինք մի վայրում, և մեզ մոտ չստացվեց, բայց մենք չհանձնվեցինք, և դա սարսափելի դժվարացավ: Մենք հիմա կրկին քաղաքի կենտրոնում ենք: Այն, ինչ ճշմարիտ է այս եկեղեցու համար, ճշմարիտ է քո անձնական կյանքի և անձնական ձգտումների, ինչպես նաև անձամբ քո կյանքում Աստծո կանչի համար: Մի ակնկալիր, որ թեթև կյանք կունենաս:

Բայց այսօր, ինչպիսիսն էլ լինի քո իրավիճակը, դու կարող ես վերցնել խոստումներից որևէ մեկը, որ պահանջել ես վերջին յոթ տարիներին, օրինակ՝ «ապահովում», «Ես եմ Տերը՝ քո Բժիշկը», եթե խճճվել ես քո ընթացքի մեջ կամ չգիտես, թե ինչ ես անում, վերցրու այս խոստումը. «Տերն է իմ հովիվը. Նա առաջնորդում է ինձ»:

Մեր խնդիրը նրանում է, որ երբ մենք հանձնում ենք մեր ճանապարհը Տիրոջը, ու եթե Նա չի հետևում այն ճանապարհին, որը մենք ենք որոշում, մենք մտածում ենք, որ Նա չի առաջնորդում: Այս հավատքի գործը այսպիսին է. վստահիր Աստծուն, երբ անհանգստության ժամանակ պնդում ես այդ խոստումներից որևէ մեկը, լինի դա «Տերն է իմ հովիվը» կամ «Աստված իմ խաղաղությունն է»... կառչիր դրանից և աչքերդ վեր բարձրացրու այսօր այն հանգամանքներից, որոնք քեզ ընկճել են: «Աչքերդ բարձրացրու քո եղած տեղից»:

«Վեր կաց և ման եկ» ուղերձը նշանակում է «մարմինդ շարժման մեջ դիր»: Դադարի մտածել այդ մասին և սկսիր մարմինդ գործողության մեջ դնել՝ հավատալով, որ Աստված կանի այն, ինչ ասաց, փոխարենը թույլ տալու, որ կասկածն ընկճի քեզ և սպասելու, որ Աստված ևս մեկ անգամ ապացուցի, որ Նա կանի այն, ինչ ասաց, այն դեպքում, երբ Նրա գիրքը սկզբից մինչև վերջ դրա դրսևորումն է: Եվ դա բավական է:

Իմ ուղերձն է. Դադարի տնքալ... դադարի իներցիայով շարժվել... դադարի վարվել այնպես, կարծես ինչ-որ մեկը այս հավատքի ընթացքը ներկայացրել է իբրև հեշտ բան: Մենք առաջնության համար ձիերի թիմ չենք ստեղծել նրանց վրա ադոքելով: Շատ քրիստոնյաներ կարծես անպետք «ադոքարար»

կոչվող միջատներ լինեն: Խոսքն ասում է. «Միայն թե թող հավատքով խնդրե առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծված և տատանված ալիքին: Այն մարդը թող չկարծե, որ Տերիցը մի բան կառնե»: Դե, հենց նոր սահմանվեց, թե ինչ է հավատքը, և այդպիսի սահմանումը ամբողջ Աստծո գրքի մեջ ցույց է տալիս, որ այն ավելին է, քան համոզմունքը: Այն գործողություն է: Ես հոգնել եմ այն մարդկանցից, ովքեր աղոթում և սպասում են, որ Աստված հայտնի Իրեն, և այդ ժամանակ նրանք կգործեն: Աղոթիր և սկսիր գործել՝ թույլ տալով, որ Աստված բռնի քեզ քո անկենդան իրավիճակում և ուղղի քեզ հրթիռի նման, որը շեղվել է իր նպատակակետից: Բայց մարմնովդ կառչիր այս վկայությունից:

Ամբողջ շաբաթ հեռուստատեսությամբ հնչում է այս ուղերձը. «Օ~, որքան հիանալի է, որ մենք քաղաքի կենտրոնում ենք: Այս օրերից մի օր ես իջնելու եմ այնտեղ»... Նրանք, ովքեր այնտեղ են և ծափահարում էին, այստեղ իջեցրեք ձեր փոքրիկ մոլորակը:

Հիմա, իմ 45 բուսերն լրացավ, և ես չեմ քարոզում այս ուղերձները գվարճացնելու նպատակով: Կան մարդիկ, ովքեր այստեղ նստած են և հավատքի քայլեր են ձեռնարկել, ովքեր լսել են Աստծո խոստումը, և երբեմն, երբ կարդացել են Աստվածաշունչը, ինչ-որ բան դուրս է ցատկել այնտեղից: Ինչպես Կարլ Բարտն էր ասում, նա մի հատված էր կարդում, և այն կենդանի գազանի նման ցատկում է նրա վրա և բռնում նրան, ու նա իմանում է, որ այդ խոստումը փորձության պահին Աստծուց խոսք էր իր համար: Երբ դու համոզված ես դրանում, երբ դու պահանջել ես խոստումը և սկսել գործել ու սայթաքել ես, և ձեզանից շատերը կորցրել են հավատքը...

Մեզ մոտ կան մարդիկ, ովքեր պահանջում են տասանորդի խոստումը. նրանք սկսել են տասանորդ տալ ու հետո դադարել են տալ մոտ ութ ամիս: Հետո նրանք զանգում են ու ասում. «Ես պատրաստվում եմ ետ վճարել իմ բոլոր տասանորդները»: Եթե ես սերժանտի ատրճանակ ունենայի, ես անցք կբացեի իմ հեռուստացույցի մեջ: Ես նկատի ունեմ, որ եթե դու մաս-մաս չէիր կարողանում դա անել, ապա հիմա ինչպե՞ս ես պատրաստվում ամբողջը վճարել: Համոզված եղիր և համապատասխան ծանրության բեռ վերցրու քեզ վրա... Աստված կհասկանա, թե ինչու դու չես կարող դա անել: Որտեղ էլ լինես այսօր քո հավատքի ճանապարհորդության մեջ, եթե խառնաշփոթի մեջ ես հայտնվել, դու բավականին լավ ընկեր ունես, ինչպիսին Աբրահամն է: Եթե դու ընկճված ես և հենց նոր կորցրել ես այն լավագույն մասը, որ մտածում էիր, թե կկարողանաս պահպանել, դադարիր տնքտնքալ: Սա *հավատ-ացողներով* լի եկեղեցի է:

«Աչքերդ բարձրացրու քո եղած տեղից» և ամուր բռնվիր այդ խոստումից և սկսիր քայլել դրա մեջ, և սկսիր վարվել այնպես, կարծես դու հավատում ես, որ Աստծո Խոսքը ավելի ճիշտ է լինելու, քան որևէ բան քո իրավիճակի մեջ: Եվ եթե դու պետք է մահանաս՝ կառչած մնալով այդ խոստումից, դա չի նշանակում, որ դու նահանջում ես: Դադարիր պաշտպանական դիրք գրավել Աստծուն վերաբերող հարցերում: Ջորջ

Պատոնը ինձ նման քրիստոնյա է, որը ասել է. «Նահանջե՞լ: Թող դժոխքը նահանջի: Մենք առաջ ենք շարժվում թիկունքից»:

Ահա թե ինչ է ՀԱՎԱՏՔԸ: Դա ինչ-որ խորհրդապաշտական «վու-վու-վու» չէ: Այն Աստծո խոստումը վերցնելն է և ասելը. «Ես Քեզ կտեսնեմ երկնքում` խոստումը դեռես ձեռքումս պահած ու կհարցնեմ. «Ինչու՞ չկատարեցիր այն»: Կամ դա կկատարվի հենց այստեղ:

Ահա թե ինչ է ՀԱՎԱՏՔԸ. և ես կուզեի տեսնել, որ դու դա անում ես:

Եկեք երգենք: Եվ ես պատրաստվում եմ երկրորդ զոհաբերությունը հավաքել, որպեսզի անհավանության բացականչություններ չհղեք իմ հասցեին: Կտեսնվենք հաջորդ կիրակի: Վայելեք ձեր շենքը:

Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են